ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

2016 թվականի ներդրումային գործունեության

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան.....3

ԲԱԺԻՆ 1.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները.....4

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը.....4

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները.....5

ԲԱԺԻՆ 2.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 6

Տրանսպորտային միջոցների փոխարինմանն ուղղված ներդրումներ.....6

ԲԱԺԻՆ 3.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը.....6

Հղումներ օգտագործված նյութերին.....8

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №399Լ որոշումով հաստատված 2017 թվականի աշխատանքային ծրագրի 20-րդ կետի և արտացոլում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) [Որոշում 1, Որոշում 2] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 2016 թվականի Ներդրումային ծրագրի կառուցվածքը, կատարման ցուցանիշները և մոնիթորինգի արդյունքները

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը

2016 թվականի ընթացքում նախատեսվում էր 4 109,6 մլն դրամի ներդրումներ հետևյալ հիմնական ուղղություններով.

- «Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցման ուղղությամբ նախատեսված էր իրականացնել ենթակայանի միկրոպրոցեսորային

սարքվածքների, բաժանիչների, 10 կՎ լարման բջիջների և լարման տրանսֆորմատորների փոխարինում, էլեկտրական սարքավորումների և սարքվածքների տեղակայման (կարգաբերման) աշխատանքներ, ինչպես նաև շինարարական աշխատանքներ:

- Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումների շրջանակում նախատեսվում էր Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների, արտադրական նշանակության սարքավորումների և գործիքների ձեռքբերում, իսկ «Արևելյան» մասնաճյուղում՝ շենքերի, շինությունների նորոգման աշխատանքներ:

Այս ուղղությամբ համաձայնեցված համաձայնեցված ծավալներում ներառվել են նաև կառավարման արդյունավետության բարձրացման և միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ընկերության սեփական միջոցներով իրականացվող ներդրումները, ենթակայաններում ավտոտրանսֆորմատորների անընդհատ հսկողության համակարգի ներդրումը, ինչպես նաև չշահագործված ԱՏԴՑՏՆ-125000/220 կՎԱ ավտոտրանսֆորմատորի նորոգման աշխատանքները:

Ընկերության ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների և ենթաուղղությունների միջև ներկայացված է Գրաֆիկ 1-ում:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ 2 441,1 մլն դրամը, նախատեսված է «Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցման ուղղությամբ:

Համաձայնեցված ծավալներից համեմատաբար խոշոր ներդրումներ նախատեսվել են ավտոտրանսֆորմատորների անընդհատ հսկողության համակարգի ներդրման՝ 569,6 մլն դրամ, միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ընկերության սեփական միջոցներով իրականացվող ներդրումների՝ 562,4 մլն դրամ, շրջանակներում: Ներդրումային ծրագրի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումների մյուս մասը՝ 536,5 մլն դրամ, կամ ընդհանուր ներդրումների 13,1%-ը, նախատեսված էր ձեռք բերել՝ 24,1 մլն դրամի գրասենյակային գույք, 31,4 մլն դրամի համակարգչային տեխնիկա և համալրող սարքավորումներ, 176,2 մլն դրամ արժեքով՝ արտադրական նշանակության սարքեր և գործիքներ: Նախատեսված էր Ընկերության կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ 79,1 մլն դրամի ներդրումներ, իսկ ԱՏԴՑՏՆ-125000/220կՎ

ավտոտրանսֆորմատորի նորոգման համար՝ 199,0 մլն դրամ, 26,8 մլն դրամ՝ «Արևելյան» մասնաճյուղում՝ նորոգման աշխատանքների համար:

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և մոնիթորինգի արդյունքները

Համաձայն ներկայացված Հաշվետվության 2016 թվականի ընթացքում Ընկերությունը ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացրել է 123,1 մլն դրամի ներդրումներ, որից 102,8 մլն դրամ արժեքով ձեռքբերված հիմնական միջոցները հանձնվել են շահագործման, իսկ մնացած 20,3 մլն դրամի ներդրումները մնացել են անավարտ:

Ներդրումներ են իրականացվել ընդամենը չորս ենթաուղղություններով: Իրականացված ներդրումների ծավալը կազմում է նախատեսված ծավալի 2,5%-ը:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից 2016 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները (ենթաուղղությունները)	Հանձնաժողովի հետ 2016 թվականի համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		2016 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրու-մային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	«Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում	2 441.1	59.4%	-	0.0%	0.0%
2	Գրասենյակային գույքի ձեռքբերում	24.1	0.6%	17.4	17.0%	72.3%
3	Համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում	31.4	0.8%	22.5	21.9%	71.7%
4	Արտադրական նշանակության սարքավորումների և գործիքների ձեռքբերում	176.2	4.3%	61.9	60.2%	35.1%
5	Ենթակայաններում ավտոտրանսֆորմատորների անընդհատ հսկողության համակարգի ներդրում	569.6	13.9%	-	0.0%	0.0%
6	Կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներ	79.1	1.9%	1.0	0.9%	1.2%
7	Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ընկերության սեփական միջոցներով իրականացվող ներդրումներ	562.4	13.7%	-	0.0%	0.0%
8	ԱՏԴՑՏՆ-125000/220կՎ ավտոտրանսֆորմատորի նորոգում	199.0	4.8%	-	0.00%	0.0%
9	«Արևելյան» մասնաճյուղում նորոգման աշխատանքներ	26.8	0.7%	-	0.0%	0.0%
10	**Ընդամենը**	**4 109.6**	**100.0%**	**102.8**	**100.0%**	**2.5%**

«Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում

Զովունի ենթակայանի օգտակար ծառայության ժամկետի երկարացման և անխափան շահագործման ապահովման նպատակով անհրաժեշտ էր՝ հնացած և ֆիզիկապես մաշված, շահագործման ռեսուրսները սպառած ուժային սարքավորումները փոխարինել նորերով, տեխնոլոգիապես հնացած ռելեական պաշտպանության սարքավորումները՝ միկրոպրոցեսորային ռելեներով, ինպես նաև իրականացնել քայքայված երկաթբետոնյա կառույցների, խրամուղիների, հիմքերի, հողանցման կոնտուրների վերականգնողական շինմոնտաժային աշխատանքներ, արտադրական շինությունների հիմնանորոգումներ և այլն աշխատանքներ: Նշված աշխատանքների իրականացման համար Ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրով նախատեսված էր 2 441,1 մլն դրամ:

2016 թվականի ընթացքում այս ուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել:

Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով 2016 թվականի ընթացքում նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 24,1 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2016 թվականի ընթացքում փաստացի իրականացված ներդրումները կազմում են 17,4 մլն դրամ,
- համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում՝ 31,4 մլն դրամ արժեքով: Փաստացի 2016 թվականի ընթացքում իրականացվել է 22,5 մլն դրամի ներդրումներ:
- արտադրական նշանակության սարքավորումների և գործիքների ձեռքբերում՝ 176,2 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 61,9 մլն դրամի ներդրումներ,
- կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներ՝ 79,1 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 1,0 մլն դրամի ներդրումներ,

- միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ընկերության սեփական միջոցներով իրականացվող ներդրումներ՝ 562,4 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ իրականացվել են 20,3 մլն դրամի ներդրումներ, որոնք շահագործման չեն հանձնվել:

Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ ուղղության մյուս ենթաուղղություններով 2016 թվականի ընթացքում ներդրումներ չեն իրականացվել:

ԲԱԺԻՆ 2.
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման նպատակով վերլուծության ընթացքում իրականացվել են հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալների համադրում:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները և այն, որ Ընկերության կողմից 2016 թվականին իրականացված և շահագործման հանձնված ներդրումներն ամբողջությամբ իրականացվել են Ներդրումային ծրագրով համաձայնեցված ուղղությունների և ծավալների շրջանակում, ուստի 2016 թվականին իրականացված և ավարտված 102,8 մլն դրամ ներդրումներն ամբողջ ծավալով հաշվի կառնվեն ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Ստորև՝ աղյուսակ 2-ում ներկայացված է Ընկերության կողմից 2016 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

1	2016 թվականի ներդրումային ծրագրով համաձայնեցված ներդրումների ընդհանուր ծավալը	**4 109.6**
2	2016 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ներդրումների ծավալը	**102.8**
3	**2016 թվականի ընթացքում իրականացված ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**102.8**

Հաշվի առնելով, որ Ընկերությունը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված ներդրումային ծրագիրը իրականացրել է ընդամենը 2,5 %-ով՝ կարելի է եզրակացնել, որ Ընկերությունը պատշաճ չի գնահատել իր հնարավորությունները Ներդրումային ծրագրի հաստատման և իրականացման վերաբերյալ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 27-ի №10Ա որոշումը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Որոշում - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 19-ի №287Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 27-ի №10ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Հաշվետվություն - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին Ընկերության կողմից ներկայացված հաշվետվություն